

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ ՀՐԱՅՐԻ

**ՁԻԱՆՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**Ժ. 02. 02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Վարդան Ստեփանի Ոսկանյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր
Յասմին Դում-Թրագուտ (Ավստրիա)

բանասիրական գիտությունների թեկնածու
Արտյոմ Արտաշեսի Տոնոյան

**Առաջատար
կազմակերպություն՝** Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2020թ. փետրվարի 10-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Լեզվաբանության
019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր
Լուսավորչի 15):

Սեղմագիրն առաքված է 2019թ. դեկտեմբերի 25-ին:

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ընտանի կենդանիների անվանումների համակարգը պարսկերենի և իրանական մյուս լեզուների բառապաշարի ամենահին և ամենակայուն շերտերից մեկն է: Թեմատիկ բառապաշարի ուսումնասիրությունից պարզվում է, որ ընտանի կենդանիների բազմաթիվ անվանումների մեջ առանցքային տեղ են գրավում *ծի, ուղի*¹ նշանակող բառերը:

Պարսկերենում ձիանունների իմաստային դաշտն ասքի է ընկնում յուրահատուկ ճոխությամբ և չափազանց հարուստ է *ծի* իմաստային խմբի եզրերով:

Այս լեզվի բառապաշարում ձիանունների առատությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ձին իրանական ժողովուրդների շրջանում դարեր շարունակ նաև հատուկ պաշտամունքային և գործառական նշանակություն ունեցող կենդանի է համարվել: *Ձիու* առաջին հիշատակությունը իրանական լեզուներում հանդիպում է դեռևս գրադաշտականության սուրբ գրքի՝ Ավեստայի «Միհր Յաշտ» հիմնում և այլուր, որտեղ խոսվում է Միհր (Միթրա) աստծո արագավազ, սրբազան սպիտակ ձիերի մասին²:

Ատենախոսությունը շարադրված է իրանական, հայկական և օտարալեզու սկզբնաղբյուրների համադիր քննությամբ: Այն ներառում է ձիանունների չափազանց հարուստ և մեծաթիվ մի բույլ, որը վկայված է ժամանակակից պարսկերենում և նրա պատմական ու արդի բառապաշարի անքակտելի բաղկացուցիչն է:

Ատենախոսության մեջ ներգրավված բոլոր ձիանունները դասակարգվել, բառակազմորեն վերլուծվել և ստուգաբանվել են՝ հաշվի առնելով այլ իրանական լեզուների, ինչպես նաև արաբերենի և թյուրքական լեզուների ու բարբառների տվյալները: Հատուկ ուշադրություն է դարձվել ձիանունների իմաստային խմբի հայ-պարսկական փոխառնչությունների ոլորտին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պարսկերենի և հայերենի զարգացման ներկա փուլում արդիական են այս լեզուներին վերաբերող տարբեր խնդիրների արծարծումը, երկու լեզուների բառապաշարի համակարգային կամ մասնակի՝ առանձին իմաստային խմբերի զուգադրական քննությունը, որը նոր շերտեր կարող է բացել այդ լեզուների դարավոր շփումների համատեքստում:

Պարսկերենում և հայերենում ընտանի կենդանիների անվանումները, մասնավորապես ձիանունները, որոնք առանցքային տեղ են զբաղեցնում ընտանի կենդանիների բնիկ և փոխառյալ բառաշերտի մեջ, մինչև այժմ բավարար չափով չեն ուսումնասիրվել և չեն ենթարկվել համակողմանի գիտական քննության:

Պարսկերենում ընտանի կենդանիների անվանումները, հատկապես ձիանունները, չեն ենթարկվել նաև լեզվաբանական լուրջ ուսումնասիրության: Դրանք սահմանափակվում են մի քանի հոդվածներով, որոնք էլ հիմնականում պարսից գրականության մեջ հանդիպող

¹ Թեմայի ուսումնասիրությունից պարզվել է, որ պարսկերենի ընտանի կենդանիների անվանումների մեջ ձիանունների ընդհանուր թիվը հասնում է 400-ի (այն կազմում է պարսկերենում ընտանի կենդանիների անվանումների 36 %-ը), իսկ ուղտի անվանումները՝ 600-ի (45 %):

² Авеста в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака, Санкт-Петербург, журнал "Нева", 1997, 268 ст.

իրանական ծագման քիչ թե շատ հայտնի ձիերի կամ էլ իրանական մշակույթում ձիու դերի և նշանակության մասին են: Չկան նաև պարսից դասական գրականության մեջ հանդիպող ձիանունների ամբողջական ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներ՝ բացառությամբ Ֆիրդուսիի «Շահնամե»-ի (10-րդ դ.) բառապաշարի մասին որոշ աշխատանքների, որոնցում ընտանի կենդանիների շարքում քննվում են ձիանուններ:

Չկա որևէ ուսումնասիրություն, որտեղ համաժամանակյա և տարածամանակյա կտրվածքով փորձ արված լինի քննության առնել պարսկերենի և հայերենի բառապաշարում ընտանի կենդանիների թեմատիկ խմբերը³:

Ձիանունների վկայությունները հայերենում ներկայանում են հայոց լեզվի տարբեր փուլերում և բարբառներում: Հայոց մատենագրության մեջ հանդիպում են իրանական ծագման ձիանուններ: Գրաբարում և միջին հայերենում վկայված իրանական ծագման ձիանունների համեմատական քննությունը վեր է հանում երկու լեզուներում «ձի» նշանակող առանձին բառամիավորների ընդհանրությունները և կիրառության առանձնահատկությունները: Այս բառամիավորները հայերենի իրանական փոխառությունների ամենաուշագրավ մասն է, մանավանդ որ դրանցից շատերը հինգերորդ դարի հավաստի և հնագույն վկայություններ են:

Ուստի պարսկերենի և հայերենի պատմական փոփոխություններն ուսումնասիրելու, ինչպես նաև երկու լեզուների պատմական փոխառնչությունների առումով կարևոր նշանակություն ունի ձիանունների համեմատական-զուգահղրական քննությունը:

Չնայած այսօր ժամանակակից պարսկերենի և հայերենի ակտիվ բառապաշարում ոչ բոլոր ձիանուններն են գործածվում, սակայն երկու լեզուներում առանցքային դեր կատարող ձիանունների ամբողջ համակարգի հետազոտությունը կարևորվում է պարսկերենի և հայերենի ուսումնասիրության համար փաստական նյութ տրամադրելու և այս ոլորտում առկա բացը հնարավորինս լրացնելու առումով:

Ուսումնասիրությունը կարող է նպաստել նաև պարսկերենի բառապաշարում ձիանունների թեմատիկ խմբի, ինչպես նաև հայերենում ձիանունների, մասնավորապես իրանական ծագման ձիանունների վերաբերյալ արդիական գիտական մոտեցումների ձևավորմանը⁴:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

³ Հարկ է նշել, որ հայերենի կենդանիների անվանումների արդի գիտական դասակարգումը ըստ ենթադասերի, կարգերի, ընտանիքների, ցեղերի և տեսակների տվել է Ռ. Ղազարյանը, այս մասին տե՛ս Ղազարյան Ռ., Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան (վեց պրակ), Երևան, 1998թ.: Բառարանն ունի կենսաբանական ուղղվածություն:

⁴ Թեման արդիական է նաև ձիու նկատմամբ Հայաստանում և Իրանում օրավուր աճող հետաքրքրությամբ, հատկապես զուտ հայկական ծագում ունեցող դարաբաղյան ձիու ցեղատեսակի շուրջ երկար տարիներ Ադրբեջանում ծավալված հակագիտական քարոզչության համատեքստում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ արդեն մի քանի տարի է, որ Հայաստանում և Արցախում լուրջ քայլեր են ձեռնարկվում թե՛ ձիաբուծության զարգացման և թե՛ ձիավարության հին հայկական ավանդույթները վերականգնելու ուղղությամբ:

Ատենախոսության նպատակը պարսկերեն և հայերեն բառարանագրական աղբյուրներում, գրավոր հուշարձաններում, ձիամատյաններում վկայված նյութի և թեմային առջվող գրականության հիման վրա ձիանունների իմաստային խմբի համեմատական ուսումնասիրությունն է:

Այդ նպատակը իրագործելու համար մեր առջև խնդիր ենք դրել.

ա) ներկայացնել պարսկերենի բառապաշարում ընտանի կենդանիների անվանումների շարքում ձիանունների հնարավորինս ամբողջական պատկերը,

բ) դասակարգել բերված լեզվական նյութը ըստ ենթաիմաստային խմբերի և ծագման,

գ) ներկայացնել պարսկերենում վկայված ձիանունները գրաբարում, միջին և ժամանակակից հայերենում ու բարբառներում՝ համեմատելով պարսկերենի հետ՝ տալով դրանց իմաստային փոփոխությունները,

դ) անդրադառնալ պարսից դասական պոեզիայում (էպիկական ժանրի ստեղծագործություններում), ինչպես նաև ասացվածքներում, դարձվածքներում և կայուն բառակապակցություններում վկայված ձիանուններին, համեմատական նյութի ներգրավմամբ քննության ենթարկել ժամանակակից պարսկերենի, գիլաներենի, բախթիյարիի, նեհավենդիի, տաջիկերենի և հայերենի խնդրո առարկա դարձվածաբանական միավորների իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները և կիրառության իմաստային դաշտերը:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Պարսկերենում ընտանի կենդանիների անվանումների մեջ ձիանունների թեմատիկ խումբը, որը չափազանց հարուստ է թե՛ քանակական և թե՛ բովանդակային առումով, առաջին անգամ է ենթարկվում ամբողջական և համակողմանի քննության: Չնայած պարսկերենում հանդիպող որոշ ձիանունների առանձին անդրադարձ եղել է տարբեր հետազոտողների աշխատանքներում, սակայն այդ բառաշերտի ամբողջական քննություն դեռևս չի կատարվել:

Նույն ձևով նաև պարսկերենում վկայված (մասնավորապես իրանական ծագման ձիանունները) և հայերենում հանդիպող ձիանունների հարուստ բառամթերքը՝ որպես ամբողջություն, դուրս է մնացել գիտական ուսումնասիրությունների շրջանակից:

Առաջին անգամ մեկտեղելով պարսկերենում վկայված ձիանունների ամբողջական լեզվանյութը՝ փորձ է արվել այն ենթարկել ծագումնաբանական դասակարգման՝ ըստ բնիկ իրանական, արաբական և թյուրքական ծագման բառամիավորների: Բազմաթիվ ձիանուններ առաջին անգամ են ենթարկվել նաև ստուգաբանական քննության:

Աշխատանքում բացառապես լեզվական նյութի հիման վրա տրվել է թեմատիկ ողջ բառաշերտի ենթաիմաստային դասակարգումը և առանձնացվել է տամնչորս հիմնական խումբ:

Ատենախոսության գիտական նորությունը նաև այն է, որ պարսկերենում վկայված ձիանուններն առաջին անգամ համեմատվել են գրաբարում և միջին հայերենում, ինչպես նաև ժամանակակից հայերենում և բարբառներում վկայված ձիանունների հետ:

Առաջին անգամ է ներկայացվում նաև պարսկերենում վկայված ամբողջ ձիանվանական համակարգը պարսից դասական գրականության հեղինակներ Աբուլ Ղասեմ Ֆիրդուսիի,

Խաղանի Շիրվանիի և Նիզամի Գյանջավիի ստեղծագործություններում (ծիանվան վկայությունը համապատասխան պարսկերեն երկտողում և թարգմանությամբ)՝ աղյուսակի տեսքով տալով ձիանունների թվային պատկերը (տե՛ս Աղյուսակ 2):

Պարսկերենում բավականին ընդգրկուն են ձի կենդանու անունը պարունակող ասացվածքները, դարձվածաբանական միավորները, որոնք իրենց համարժեքներն ունեն նաև իրանական այլ լեզուներում: Այս կարգի դարձվածքների և կայուն բառակապակցությունների ուսումնասիրությունը ոչ միայն լեզվական առանձնահատկությունների բազմաթիվ հետաքրքիր կողմեր է վեր հանում, այլ նաև լայն պատկերացում տալիս տվյալ ժողովրդի աշխարհընկալման, մշակույթի, կենցաղի և առօրյա կյանքի մասին: Ուսումնասիրության առարկա դարձվածքներն ու ասացվածքները հայերենում և պարսկերենում լայն առումով գտնվում են իմաստային որոշակի հարաբերության մեջ: Ժամանակակից պարսկերենի, բախթյարիի, նեհավենդիի, գիլաներենի, տաջիկերենի և հայերենի (համեմատվող դարձվածքները ընտրվել են իմաստային և կառուցվածքային առումով առավել մոտ լինելու սկզբունքով) ընձեռած նյութի հիման վրա ատենախոսության մեջ առաջին անգամ քննության են ենթարկվել այն ասացվածքները, դարձվածքները և կայուն բառակապակցությունները, որոնք ձևավորվել են «ձի» առանցքային բառույթի կիրառությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները կարող են նպաստել պարսկերենի բոլոր ընտանի կենդանիների անվանումների ուսումնասիրությանը, ինչպես նաև պարսկերենում վկայված ձիանունների և հայերենի ու բարբառների իրանական փոխառությունների քննությանը: Աշխատանքում ընդգրկված նյութը կարելի է օգտագործել իրանական ժողովուրդների պատմամշակութային ուսումնասիրություն կատարելիս, իսկ բառացանկերը՝ թեմատիկ բառարաններ կազմելու համար:

Ուշագրավ է հատկապես աշխատանքում քննության առնված պարսկերեն և հայերեն ձիամատյանների, ձիու բժշկարանների տրամադրած բառամթերքը, որոնք իրենց տեսակի մեջ եզակի են համարվում և կարող են համապատասխան նպատակին ծառայել:

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում և երաշխավորվել պաշտպանության:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երեք գլուխներից, որոնք բաժանված են ենթագլուխների, ենթամասերի, եզրակացություններից, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերից, հավելվածներից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ անդրադարձ է կատարվում ձիու՝ իրանական ժողովուրդների կյանքում, մշակույթում, լեզվամտածողության, պատմության մեջ ունեցած դերին և նշանակությանը: Այնուհետև ավելի մանրամասն ներկայացվում է պարսից լեզվի բառապաշարում ընտանի կենդանիների անվանումների շարքում ձիանունների զբաղեցրած տեղը, անդրադարձ է կատարվում դրանց ուսումնասիրության պատմությանը, և կատարվում թեմային առնչվող գրականության քննություն, ինչպես նաև պարսկերենում վկայված այն ձիանունների ուսումնասիրության պատմությանը, որոնք հանդիպում են հայոց լեզվի տարբեր փուլերում ու բարբառներում: Հարկ է նշել, որ ատենախոսության ամբողջ լեզվական նյութը հիմնականում քաղվել է պարսկերեն և հայերեն բառարանագրական աղբյուրներից⁵:

Հաշվի առնելով այն, որ ցանկացած լեզվում ձիանունների ուսումնասիրությունն առանց հնագույն ձիամատյանների, ձիագիտարանների ու ձիու բժշկարանների անհնար է պատկերացնել, ուստի ներածության մեջ հարկ ենք համարել անդրադառնալ նաև դրանց:

ՓՈՒԿ 1. ՁԻԱՆՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

Ատենախոսության առաջին գլխում համակողմանի քննության է առնվում պարսկերենի ողջ ձիանվանական համակարգը՝ ըստ իմաստի և ծագման: Այս գլուխը բաղկացած է երկու ենթագլխից, որոնք էլ բաժանվում են համապատասխան ենթաբաժինների:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «Ձիանունների դասակարգումը ըստ ենթաիմաստային խմբերի»: Պարսկերենում վկայված ձիանունները համաժամանակյա մեթոդով դասակարգելիս առաջնային նշանակություն է ունեցել դրանց իմաստային քննությունը, որի շնորհիվ բացահայտվել են մի քանի ենթաիմաստային խմբերի լեզվական շերտերը: Բառապաշարի իմաստային խմբերի մանրազնին քննությունը կարևորվում է նաև տվյալ խմբի բառապաշարը հնարավորինս ամբողջական ներկայացնելու առումով, որն էլ պայմանավորված է մի շարք դժվարություններով՝ բառարաններում վկայված չլինելը, կամ վկայված բառի բնագրային օրինակի բացակայությունը, նույն բառի տարբեր ձևերի առկայությունը և այլն: Ատենախոսության մեջ պարսկերենում վկայված ողջ ձիանվանական համակարգը ենթարկվել է հետևյալ ենթաիմաստային դասակարգման.

1. Ձիու ընդհանուր անվանումներ
2. Հոլվատակի անվանումներ
3. Մատակի անվանումներ
4. Մտրուկի անվանումներ
5. Երամակի անվանումներ
6. Ձիանուններն ըստ ցեղատեսակի

⁵ Մինչև այսօր պարսկերենում և հայերենում (հայերենում ձիանունների թիվը հասնում է մոտ 200-ի) ընտանի կենդանիների ամբողջ բառապաշարը ներկայացնող որևէ բառարանի կամ ծավալուն ուսումնասիրության բացակայության պատճառով, ատենախոսության լեզվական հիմնական նյութը քաղվել է պարսկերենի, իրանական մի շարք լեզուների և հայերենի բառարանագրական աղբյուրներից (թվով 120 բառարան և Յ. Կարստի «Միջին հայերենի գիտական բառարանի» ձեռագիրը Մատենադարանի պետական արխիվից), գրական գրավոր հուշարձաններից, ձիամատյաններից և ձիու բժշկարաններից, որոնցից մեկը՝ «Farasnā-me Qayyem-e Nehāvendi» ձիամատյանը (12-րդ դ.), պարսկերեն ամենաին ձիամատյանն է համարվում:

7. Ձիանուններն ըստ զուգավորման
8. Ձիանուններն ըստ կատարած գործառույթի
9. Ձիանուններն ըստ ձիու ֆիզիկական և արտաքին առանձնահատկությունների
 - 9.1. Ձիանուններն ըստ մարմնի կառուցվածքային առանձնահատկությունների
 - 9.2. Ձիանուններն ըստ ուժային հատկանիշների
 - 9.3. Ձիանուններն ըստ մարմնի արտաքին առանձնահատկությունների
 - 9.4. Ձիանուններն ըստ դեմքի, գլխի, բաշի և պոչի առանձնահատկությունների
10. Ձիանուններն ըստ գույնի և մարմնի տարբեր մասերի գունային առանձնահատկությունների
11. Ձիանուններն ըստ ընթացքի արագության և վարգի առանձնահատկությունների
12. Ձիանուններն ըստ վարքի
13. Ձիանուններն ըստ տարիքային առանձնահատկությունների
14. Առասպելական ձիանուններ:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «Ձիանունների դասակարգումը ըստ ծագման», որն էլ բաղկացած է երեք ենթաբաժնից:

Ձիանունները պարսկերենում ծագումնաբանական և ստուգաբանական առումով բավական հետաքրքիր պատկեր են ներկայացնում: Դրանց մանրամասն քննությունը, ըստ էության, լույս է սփռում այս լեզվի ձիանվանական ողջ համակարգի ձևավորման պատմության և հետագա զարգացման ու հարստացման գործընթացի վրա, որը կարևորվում է նաև պարսկերենի բառապաշարային առանձնահատկությունների վերհանման տեսանկյունից: Այս գլխում պարսկերենում վկայված ձիանունները ենթարկվել են հնարավորինս մանրամասն և համակողմանի քննության՝ առանձնացվելով իրանական ծագման և փոխառյալ (արաբական և թյուրքական) բառերը:

Այս ենթագլխի առաջին ենթաբաժինը՝ «Բնիկ իրանական ծագման ձիանուններ», աշխատանքի ամենածավալուն հատվածն է, որտեղ մանրամասն քննության են առնվում պարսկերենում վկայված իրանական ծագման ձիանունները⁶:

Բնիկ իրանական ծագման ձիանունները կազմում են պարսկերենի ձիանվանական համակարգի ամենակարևոր հատվածը՝ ի ցույց դնելով այս լեզվի բառապաշարի ոչ միայն հարստությունը, այլ նաև ժառանգական հստակ կապը հին և միջին իրանական լեզուների հետ: Լինելով վերբարբառային գրական տարբերակ՝ կոյնե, նոր պարսկերենն իր մեջ ամփոփել է նաև ոչ պարսկական՝ իրանական ծագման ձիու անվանումներ, որոնցից ամենաուշագրավը հենց *asb/asp* «ծի» բառամիավորն է (տե՛ս Աղյուսակ 1), որն ակնհայտորեն մարապարթևական (հյուսիսարևմտյան) փոխառություն է՝ վկայված դեռևս հին պարսկերենի ժամանակաշրջանից: Չնայած սրան՝ բնիկ իրանական ծագման ձիանունների մեծ մասն ի ցույց է դնում հենց պարսկերենին (հարավարևմտյան) հատուկ հնչյունական զարգացումներ՝ այսպիսով փաստելով բնիկ ձևերի գերակայությունը: Անհրաժեշտ է ասել, որ այս բաժնում իրանական ծագման ձիանունների հետ ներկայացվում են նաև քննության առնված ձիանունների հոմանիշները նաև հայերենում:

⁶ Հարկ է նշել, որ ատենախոսության մեջ ելնելով բնիկ իրանական ծագման ձիանունների առատությունից, նպատակահարմար ենք գտել իրանական ծագման ձիանունները բաժանել արմատական և նկարագրական ձիանունների, որոնցից երկրորդը տեղակայված է հավելվածում:

«Ձի» բառամիավորը իրանական լեզուներում և բարբառներում

Աբիյանեի բրբռ.	<i>asb</i>	քրդերեն	<i>asp, hasp, hastūr, še</i>	Շամիրգահի բրբռ.	<i>asb</i>
Աբուզեյրաբահի բրբռ.	<i>asb</i>	Քարինզյանի բրբռ.	<i>âsp</i>	Շուշթարի բրբռ.	<i>asb</i>
Աֆթարի բրբռ.	<i>asm</i>	Քաշանի հրեաների բրբռ.	<i>asp</i>	սիվանդի	<i>usūr, usūre</i>
Արդեսթանի բրբռ.	<i>āsm, asb</i>	Լասզերի բրբռ.	<i>asb</i>	սեմնաներեն	<i>äsp</i>
Աշթիյանի բրբռ.	<i>asb, nariān</i>	Լարեսթանի բրբռ.	<i>asp</i>	Սանգլիչի բրբռ.	<i>vərōk</i>
բելուզերեն	<i>asp, apsha ps, hasp, koran, nariān</i>	Մահալլաթի բրբռ.	<i>abs, naryun</i>	Սանգեսարի բրբռ.	<i>asb, asm</i>
Բարտանգի բրբռ.	<i>vōrj</i>	Մամասանի բրբռ.	<i>asp</i>	Սոհի բրբռ.	<i>asp, äs, nār</i>
Բիյաբանաքի բրբռ.	<i>asp</i>	մազանդարաներեն	<i>asb</i>	Սորխեի բրբռ.	<i>asb, asm</i>
Յազդի գրադաշտականների բրբռ.	<i>asp, asb</i>	Նոուքիանի բրբռ.	<i>asb</i>	տաջիկերեն	<i>asp</i>
Բաշգարդի բրբռ.	<i>asb</i>	Նայինի բրբռ.	<i>äsp</i>	թալիշերեն	<i>asb</i>
բախթիյարի	<i>asp</i>	Նաթանգի բրբռ.	<i>asm, asb</i>	Թարի բրբռ.	<i>asm</i>
Դելիջանի բրբռ.	<i>asp</i>	օրմուրի	<i>γâsp</i>	թաթերեն	<i>æs</i>
դեզֆուլի	<i>asb</i>	պարաչի	<i>ōsp</i>	Վանեշանի բրբռ.	<i>asp.</i>
Էբրահիմաբադի բրբռ.	<i>asb</i>	պարսկերեն	<i>asb, bāra, nar yān,</i>	Վարգանեի բրբռ.	<i>asm</i>
Ֆարիզանդի բրբռ.	<i>asm</i>	փաշթո	<i>ās(m), aspa(f)</i>	վախաներեն	<i>yaš</i>
Գազի բրբռ.	<i>āsm</i>	Ղոհրուդի բրբռ.	<i>as, asp</i>	Խանսարի բրբռ.	<i>äsb, asm</i>

Քիյանի բրբռ.	<i>asp</i>	Ռուշանի բրբռ.	<i>vrj</i>	Խուֆի բրբռ.	<i>vrj</i>
գիլաներեն	<i>äsb</i>	Ռաշառույի բրբռ.	<i>vörj</i>	յաղնուբերեն	<i>asp, vōra</i>
Հարգանդի բրբռ.	<i>osp, osb</i>	Սարիքուլի բրբռ.	<i>vrj</i>	Յադադեի բրբռ.	<i>yasp</i>
Քորդուլի բրբռ.	<i>asp</i>	Սեդեհի բրբռ.	<i>asm</i>	Յարանդի բրբռ.	<i>asb</i>
Քեշեի բրբռ.	<i>asm</i>	Սազգաբադի բրբռ.	<i>asb</i>	յազգուլամերեն	<i>varak, nar-varak</i>
Քալասուրի բրբռ.	<i>osb</i>	Չեֆրեի բրբռ.	<i>asm</i>	զազայերեն	<i>astôr, üstôr, estôr, stor, astôr</i>

Երկրորդ ենթազվխի երկրորդ ենթաբաժինը վերնագրված է «Արաբական ծագման ձիանուններ»։ Պարսկերենում ձիանունների մեջ առավել հաճախ են հանդիպում արաբերենից փոխառյալ ձիանուններ, որոնց միայն մի փոքր մասն է այժմ գործածվում պարսից լեզվի ակտիվ բառապաշարում։ Դրանցից շատերը պարսկերենում ենթարկվել են որոշակի հնչյունափոխության և բավականին լայն իմաստային փոփոխությունների։ Այս փոխառությունների նվազ հատվածն է փոխատու լեզվում հանդես գալիս ձիանվան նշանակությամբ։ Արաբական «ձի» նշանակությամբ որոշ փոխառություններ էլ պարսկերենից անցել են նաև իրանական այլ լեզուների կա՛մ նույն նշանակությամբ, կա՛մ էլ իմաստի որոշակի փոփոխությամբ։

«Թյուրքական ծագման ձիանունները» ենթաբաժնում քննության են առնվել պարսկերենի՝ թյուրքական ծագման ձիանունները, որոնք քանակապես զգալիորեն զիջում են բնիկ և արաբական փոխառյալ բառերին՝ այսուհանդերձ կազմելով պարսկերենի ձիանվանական համակարգի բավականին ուշագրավ շերտը։ Պարսկերենում արձանագրված ձիանունների թյուրքական շերտը ցուցիչ է այն բանի, որ այս լեզուն, սկսած Կենտրոնական Ասիայում և Խորասանում իր ձևավորման վաղ փուլից ընդհուպ մինչև Իրանում պետական լեզու դառնալը, բավական սերտ շփումներ է ունեցել հարևան թյուրքական լեզուների և բարբառների հետ։ Ըստ այդմ՝ պարսկերենում առկա են թե՛ դեռևս Կենտրոնական Ասիայի թյուրքական լեզուներից փոխառյալ և թե՛ ատրպատականյան թյուրքերենից մուտք գործած ձիանուններ, որոնց անդրադարձ ենք կատարել այս ենթազվխում։ Ուշագրավ է նաև այն, որ թյուրքական ծագման ձիանուններից ոչ մեկը չի հանդիպում դասական շրջանի որևէ չափածո ստեղծագործության մեջ (թերևս մեր ուսումնասիրության շրջանակներում)՝ ի տարբերություն արաբերենից փոխառյալ ձիանունների հսկայական բազմազանության, որոնք մեծ թիվ են կազմում ինչպես պարսից դասական պոեզիայում, այնպես էլ արձակ երկերում։

ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ ՎԿԱՅՎԱԾ ԶԻԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից, որտեղ քննության են առնվում պարսկերենում վկայված այն ծիանունները, որոնք հանդիպում են գրաբարում, միջին հայերենում, ինչպես նաև ժամանակակից հայերենում և բարբառներում:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «Պարսկերենում վկայված ծիանունները գրաբարում և միջին հայերենում», որտեղ քննվում են այն ծիանունները, որոնք վկայված են պարսկերենում (իրանական և արաբական ծագման ծիանուններ), ինչպես նաև ծիանուններ, որոնք չունեն իրենց վկայությունները պարսկերենում, սակայն հայերեն բառի արմատը ստուգաբանորեն հանգում է իրանականին:

Գրաբարում «ծի» նշանակող 53 բառամիավոր է վկայված (թեքստ մեր ուսումնասիրությունների շրջանակներում): Հայ մատենագրության մեջ իրանական փոխառությունների շարքում առանձնահատուկ տեղ ունեն իրանական ծագման ծիանունները, մանավանդ որ դրանցից շատերը հինգերորդ դարից ավանդված հավաստի և հնագույն վկայություններ են:

Միջին հայերենում պատկերը փոխվում է. «ծի» նշանակող 48 բառամիավորից 17-ն է հանդիպում պարսկերենում (իրանական, արաբական և թյուրքական ծագման ծիանուններ), ինչպես նաև պարսկերենում չվկայված ծիանունների մի փոքր խումբ կա, որոնց ծագումն ակնհայտորեն իրանական է:

Միջին հայերենում հանդիպող ծիանունների մեջ գերակշռում են պարսկերենում վկայված արաբական փոխառությունները, որոնք հայերենում չնչին բաղմամաստային փոփոխության են ենթարկվել:

Ուսումնասիրության մեջ հայերենում վկայված իրանական ծագման ծիանունները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝

ա) պարսկերենում վկայված ծիանուններ (հայերենում հնարավոր է իմաստային դաշտի նեղացման կամ փոփոխության ենթարկված լինեն)՝ *ասպ, բերգիր, գյահկիր, զարպակ, ճարպուկ, ռահվար, սամանդ, սեավ* և այլն,

բ) ծիանուններ, որոնք չկան պարսկերենում, սակայն կա՛մ բառն է ստուգաբանորեն հանգում իրանականին (դրանք սակավաթիվ են՝ *աշխեփ (ծիու գույն), նժոյգ, բոչոյ*) կա՛մ էլ բարդ, ածանցավոր բառեր են՝ կազմված հայերենի բառակազմական օրենքների համաձայն, որի բաղադրիչներից մեկն անպայման իրանական ծագում ունի (*ասպաստրանիկ, բաշահար, երագաձի* և այլն):

Երկրորդ ենթագլուխն է «Պարսկերենում վկայված ծիանունները ժամանակակից հայերենում և բարբառներում»: Ժամանակակից գրական հայերենում և բարբառներում պարսկերենում վկայված և իրանական ծագման (պարսկերենում չվկայված) ծիանունները կազմում են նկատելի շերտ, որը գոյացել է թե՛ գրաբարից ժառանգված բառամիավորների և թե՛ նոր պարսկերենից ուղղակի կամ վերջինիս միջոցով փոխառված արաբական և թյուրքական ծագման բառերից: Այս վերջին դեպքում շատ դժվար է, իսկ հաճախ անհնարին, որոշարկել, թե արդյոք բառը հայերենին է անցել հենց պարսկերենի միջնորդությամբ, թե ուղղակի փոխառու լեզվից: Ասվածը հատկապես վերաբերում է թյուրքական ծագման ծիանուններին: Անհրաժեշտ է ասել, որ ատենախոսության մեջ հայերենի բարբառներում քննվող բառամիավորներին զուգահեռ բերվում են նաև բառի մյուս հոմանիշները:

ԳԼՈՒԽ 3. ՁԻԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԵՎ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ատենախոսության երրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից՝ «Ձիանունները պարսից դասական գրականության մեջ» և «Ձիանունները պարսկերեն ասացվածքներում, դարձվածքներում և կայուն բառակապակցություններում՝ համեմատությամբ իրանական այլ լեզուների և հայերենի»:

Պարսից դասական գրականության մեջ ձիանունների վկայությունները բավականին առատ են, հետևաբար անհնար է դրանք մեկ առ մեկ ներկայացնել մեկ ենթագլխի շրջանակներում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ընտրվել են պարսից երեք հայտնի դասականների՝ Աբուլ Ղասեմ Ֆիրդուսիի, Խաղանի Շիրվանիի և Նիզամի Գյանջավիի ստեղծագործություններում տեղ գտած ձիանունները (տե՛ս Աղյուսակ 2)՝ պարսկերեն համապատասխան երկտողի թարգմանությամբ և մեկնաբանությամբ: Նման ընտրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նշված հեղինակների երկերը էպիկական ժանրի մեծածավալ ստեղծագործություններ են, որոնցում էլ առավել հաճախադեպ է ձիանունների գործածությունը: Խնդրին մասնավորից ընդհանուրի վերաբերյալ պատկերացում կազմելու մոտեցումը բավականին ուշագրավ պատկեր է ի ցույց դնում և կարելի է ամբողջական պատկերացում կազմել պարսից դասական գրականության մեջ ձիանունների առատության մասին:

Պարսկերենում և իրանական մի շարք լեզուներում կենդանիների անուններով ասացվածքների ու դարձվածքների մեջ առավել շատ հանդիպողը «ձի» կենդանու անունն է, որը վկայում է իրանական ժողովուրդների մշակույթի մեջ և կենցաղում այս կենդանու առանձնահատուկ դեր ու նշանակություն ունենալը:

«Ձի» կենդանու անունը պարունակող որոշ դարձվածաբանական միավորներ ձևով և բովանդակությամբ նույնն են թե՛ պարսկերենում, թե՛ հայերենում, և դա պատահական չէ, որովհետև երկու ժողովուրդներն անցել են պատմական սերտ շփումների երկարատև փուլ: Հարկ է նշել, որ դրանց մի մասի իմաստը երկու լեզուներում էլ գոյություն ունի, սակայն տարբեր են արտահայտման եղանակները: Օրինակ՝ «*Asb-e tazi dar tavile gar bebandi piš-e xar, rangešān hamgun (hamčum) nagardad tabe šān hamgun (hamčum) šavad*», բոց. «Արաբական ձին թե ախոռում կապես ավանակի մոտ, եթե գույնով էլ չնմանվեն, ապա բնույթով ու վարքով կնմանվեն»: Ասացվածքը կիրառվում է, երբ երկար ժամանակ մարդիկ, իրար հետ ապրելով, նմանվում են միմյանց, կամ էլ՝ եթե վատահամբավ մարդու հետ ընկերություն են անում, ի վերջո իրենք էլ են վատ անուն վաստակում, հմմտ. գիլ. «*Adam xar babe, griftar xar nabe*»⁷ ասացվածքի հետ: Ուշագրավ են ասացվածքի հայերեն բարբառային տարբերակները՝ «Ձ՛ին կապես ձ՛իան կուշտ, յա կըճան գ՛ըլի, յա թաֆկան» (Բայազետի բարբառ), «Ծի՛ն ծիյան մոտը կապես, յա կըճան կըլի, յա թաֆկան» (Բոյ-Մարաղա), «Ձի՛ն ձ՛իու մօղ կաբին, յա աքցան կելի, յա՛ կըճան»⁸:

Աղյուսակ 2

⁷ Maraši A., Važename-ye guyeše gilaki, Rašt, Enteshārāt-e Ta’ati, 1382/2003, s. 471.

⁸ Կատվայյան Վ., Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Երևան, 2016, էջ 254:

**Ձիանունների թվային պատկերը Ֆիրդուսի, Խաղանիի և Նիզամիի
ստեղծագործություններում**

Ձիանուններ (54)	Ֆիրդուսի (33)	Խաղանիի (26)	Նիզամիի (31)
Abraš	▲	▲	
Ablaq	▲		
Adham		▲	
Arĵal		▲	
Asb/asp	▲	▲	▲
Ašqar	▲	▲	▲
Ašhab			▲
Bādṗā	▲		▲
Bādraftār			▲
Bārkeš	▲		
Bārāgi	▲		▲
Bārgir		▲	▲
Bāre	▲	▲	
Bālā (pālā)	▲		
Badrām		▲	
Bur	▲	▲	▲
Pāydār	▲		
Piltan	▲		
Tāzi	▲		▲
Tak/tag	▲		
Takāvar	▲	▲	▲
Tausan/tousan		▲	▲
Ĵanib			▲
Čarpā/čahārpā	▲		▲
Čārgām, (-e)		▲	
Čāl		▲	

Čarme/čarme/ ĵarme	▲		▲
Čavgāni/ Čowgāni			▲
Xatli		▲	▲
Xeng	▲	▲	▲
Dastgozin			▲
Diz/dize	▲		
Raxš	▲	▲	▲
Rekābi		▲	▲
Rahan ĵām			▲
Rahnavard		▲	▲
Ruyinsom	▲		
Zarde		▲	▲
Samand	▲	▲	▲
Siyāh	▲	▲	
Šabāhang	▲		
Šabdiz	▲		▲
Šabrang	▲	▲	
Šulak	▲		
Terf			▲
Faras		▲	▲
Korre	▲		▲
Komayt (-meyt)	▲		
Golgun	▲	▲	▲
Mādyān	▲	▲	▲
Navand	▲		▲
Hayun	▲		
Yakrān/yeqrān		▲	

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով ձիանունները պարսկերենում և հայերենում՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ընտանի կենդանիների անվանումները պարսկերենի բառապաշարի ամենահին և ամենակայուն շերտերից մեկն է և իրանական լեզուների հիմնական բառաֆոնդի կարևոր մասը: Դրա ուսումնասիրությունը պարզում է, որ ընտանի կենդանիների բազմաթիվ անվանումների շարքում առանցքային տեղ են գրավում *ձի* նշանակող բառերը:
2. Պարսկերենում վկայված ձիանունները համաժամանակյա սկզբունքով դասակարգելիս առաջնային նշանակություն է ունեցել դրանց իմաստային քննությունը, որի շնորհիվ բացահայտվել են մի քանի ենթաիմաստային խմբերի լեզվական շերտերը՝ ըստ ձիու սեռի, տարիքային, ֆիզիկական և արտաքին առանձնահատկությունների, ցեղատեսակի, զուգավորման, գույնի, վարքի, վարգի, ընթացքի արագության և բազմաթիվ այլ հատկանիշների: Այստեղ ուշագրավ են հատկապես ձիու թույրն արտահայտող անվանումները: Հատուկ եզրերով տարբերակված են թույրի նույնիսկ ամենանորբ երանգները: Այս սկզբունքն արդեն երևում է 10-12-րդ դդ. պարսկերեն ձիամատյաններում, ձիու բժշկարաններում և այն գրական ստեղծագործություններում, որտեղ առանձին բաժին է նվիրված ձիուն: «*Farasnāme-ye Qayyem-e Nehāvendi*» ձիամատյանում (12-րդ դ.) տարբերակվում են ձիու նույնիսկ «արժանավայել» գույներ, որոնց թիվը հասնում է 11-ի. *komeyt* «փայլուն կարմիրի ու սևի միջև գտնվող թույրը», *bur* «1. կարմրաշիկավուն, բուսորագույն ձի, 2. հրակարմիր, ձիրանի», *ašqar* «մուգ կարմրադեղին՝ սևին հարող երանգ, *samand*, *siyāh*, *xarmonj* և այլն:

Ձիանունների իմաստային քննությունից պարզ է դառնում նաև, որ պարսկերենում իրանական ծագման ձիանունների մեջ արու-էգ (մատակ-հովատակ) իմաստն արտահայտող բառերը շատ հազվադեպ են հանդիպում. դա չենք կարող ասել հատկապես արաբերենից և թյուրքական լեզուներից փոխառված, ինչպես նաև հայերենի ձիանունների մասին:

3. Ձիանունները պարսկերենում ըստ ծագման և ստուգաբանության բավական հետաքրքիր պատկեր են ներկայացնում: Դրանց մանրամասն քննությունը լույս է սփռում այս լեզվի ձիանվանական ողջ համակարգի ձևավորման պատմության և հետագա զարգացման ու հարստացման գործընթացի վրա, որը կարևորվում է նաև պարսկերենի բառապաշարային առանձնահատկությունների վերհանման տեսանկյունից:
4. Բնիկ իրանական ծագման ձիանունները կազմում են պարսկերենի ձիանվանական համակարգի ամենակարևոր և ուշագրավ հատվածը՝ ի ցույց դնելով այս լեզվի բառապաշարի ոչ միայն հարստությունը, այլ նաև ժառանգական հստակ կապը հին և միջին իրանական լեզուների հետ: Ներկայումս ժամանակակից պարսկերենում ոչ բոլոր ձիանուններն են կիրառվում՝ ի տարբերություն իրանական մի շարք լեզուների, որտեղ գործածական են ոչ միայն բազմաթիվ ձիանուններ, այլ նաև ձիու վարգը, քայլը, նույնիսկ ոտնածայնը բնութագրող բազմաթիվ եզրեր (օր. Լորեսթան նահանգի դալավանդ օ ուշնուն ցեղի լուրական բարբառի բառապաշարում ձիերի քայլը բնութագրող առանձին բառամիավորներ կան. *gom*՝ ձիու հանգիստ շարժումն է առաջին դանդաղ քայլի հետ միասին, *zoerr*՝ ձիու երկրորդ քայլի անվանումը

առաջինից (*gom*) հետո, որն ավելի արագ է, *yorxe*, հմմտ. պրսկ. *yorye*, ձիու շորորուն քայլը, մի քիչ ավելի արագ, բայց ոչ վազքով, *luq*՝ ձիու շարժվելը *yorxe*-ից հետո, սակայն դրանից ավելի արագ, *galvaz*՝ ձիու վազքը, որը *luq*-ից ավելի արագ է և մի փոքր շտապողականություն կա, *qirr*, *persas* և այլն: Մեկ այլ իրանական ժողովուրդ՝ բախթյարները մտրուկին բնութագրող բազմաթիվ բառեր ունեն. ծնված օրից մինչև չափահաս դառնալը, ծնվելուց մինչև նրան թամբին, բեռնակրությանը սովորեցնելը (մինչև 3 տարեկան) անվանում են *qal*, ձին թամբին սովորելու առաջին շրջանում կոչվում է *nuzin* (բխթ. մտրուկ), երկրորդ փուլում՝ *dozin* և այլն:

5. Արաբական ծագման ձիանունները պարսկերենի ձիանվանական բառաշերտի գերակշռ մասն են կազմում: Դրանց մեծ մասը պարսկերենում ենթարկվել է որոշակի հնչյունական և բավականին լայն իմաստային փոփոխությունների (հիմնականում տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում): Ներկայումս այդ ձիանունների միայն մի փոքր մասն է կիրառվում պարսից լեզվի ակտիվ բառապաշարում: Արաբական ծագման ձիանունները պարսկերենում ներկայացված են բավական հարուստ բառամիավորներով, որը բնորոշ է պարսկերենի ողջ ձիանվանական համակարգին՝ հաշվի առնելով արաբերենի թողած նշանակալից ազդեցությունը պարսկերենի վրա, որի արդյունքում արաբերենից փոխառյալ բառերը, ըստ էության, դուրս են մղել բնիկ իրանական ծագման բազմաթիվ բառամիավորներ կամ գործածվել են որպես դրանց հոմանիշներ: Արաբական այս փոխառությունների նվազ հատվածն է փոխատու լեզվում հանդես գալիս *ձի* կենդանու նշանակությամբ:
6. Թյուրքական ծագման ձիանունները պարսկերենում մեծ թիվ չեն կազմում: Դրանք զիջում են բնիկ և արաբերենից փոխառյալ ձիանուններին ոչ միայն քանակական առումով, այլ նաև ցեղատեսակների բազմազանությամբ, ենթաիմաստային խմբերի զանազանությամբ, ֆիզիկական և արտաքին հատկանիշների ներկայացմամբ, կառուցվածքային ու գույնի առանձնահատկություններով և այլն: Թյուրքական լեզուներից փոխառված ձիանունների համարյա թե բոլոր նշանակությունները պահպանվել են պարսկերենում: Պարսկերենում առկա են թե՛ *ղեռևս* Կենտրոնական Ասիայի թյուրքական լեզուներից փոխառյալ և թե՛ *ատրպատականյան* թյուրքերենից մուտք գործած ձիանուններ:
7. Հայերենում ընտանի կենդանիների անվանումների մեջ ուշագրավ են «ձի» նշանակող բառերը: Ձիանունների վկայություններն առավելապես վերաբերում են լեզվի վաղ և միջին շրջաններին: Գրաբարում ձիանուններն ավելի շատ են, քան միջին հայերենում: Հայ մատենագրության մեջ հանդիպում են իրանական ծագման ձիանուններ: Դրանցից շատերը հինգերորդ դարից ավանդված հավաստի և հնագույն վկայություններ են: Այստեղ կան ձիանուններ, որոնք վկայված են պարսկերենում, ինչպես նաև ձիանուններ, որոնք չունեն իրենց վկայությունները պարսկերենում, սակայն բառի արմատը ստուգաբանորեն հանգում է իրանականին:
8. Միջին հայերենում մի փոքր այլ է պատկերը: Այստեղ հանդիպում են պարսկերենում վկայված ձիանուններ, որոնց մեջ գերակշռում են արաբական փոխառությունները (դրանք հայերենում իմաստային փոփոխության համարյա թե չեն ենթարկվել), ինչպես նաև կան պարսկերենում չվկայված ձիանուններ, որոնց ծագումն ակնհայտորեն իրանական է:
9. Հայերենում վկայված իրանական ծագման ձիանունները պայմանականորեն բաժանվել են երկու խմբի՝

ա) պարսկերենում վկայված ձիանուններ (հայերենում հնարավոր է իմաստային դաշտի նեղացման կամ փոփոխության ենթարկված լինեն)՝ *ասպ, բերգիր, գյահկիր, զարպակ, ճարպուկ, ռահվար, սամանդ, սեավ* և այլն,

բ) ձիանուններ, որոնք չկան պարսկերենում, սակայն կա՛մ բառն է ստուգաբանորեն հանգում իրանականին (քանակային առումով դրանք սակավաթիվ են՝ *աշխէյ* (ձիու գույն), *նժոյգ, բոշոյ*), կա՛մ էլ բարդ, ածանցավոր բառեր են՝ կազմված հայերենի բառակազմական օրենքների համաձայն, և բաղադրիչներից մեկն անպայման իրանական ծագում ունի (*ասպաստանիկ, բաշահապ, երագածի* և այլն):

10. Իրանական ծագման և պարսկերենում վկայված ձիանունները ժամանակակից գրական հայերենում և բարբառներում կազմում են նկատելի շերտ: Այն գոյացել է թե՛ գրաբարից ժառանգված բառամիավորների և թե՛ նոր պարսկերենից ուղղակի կամ վերջինիս միջոցով փոխառված արաբական և թյուրքական ծագման բառերից:

11. Պարսից լեզվի գրական հուշարձաններում ձիանունների քննությունը հետաքրքիր պատկեր է ներկայացնում: Ելնելով ձիանունների այսչափ առատությունից՝ անհնար էր դրանք ներկայացնել մեկ աշխատանքի շրջանակներում: Քննվել են պարսից երեք հայտնի դասականների՝ Ֆիրդուսիի, Խաղանիի և Նիզամիի ստեղծագործություններում տեղ գտած ձիանունները, որոնց մանրամասն հետազոտությունից պարզ է դառնում, որ արաբերենից փոխառյալ ձիանունները պարսից գրականության թե՛ չափածո և թե՛ արձակ ստեղծագործություններում ունեն բազմաթիվ վկայություններ՝ ի տարբերություն թյուրքական ծագման ձիանունների, որոնք ունեն եզակի վկայություններ:

12. Պարսկերենում «ձի» կենդանու անունը պարունակող ասացվածքներն ու դարձվածաբանական միավորները բավականին ընդգրկուն են և ունեն իրենց համարժեքները նաև իրանական այլ լեզուներում: Դրանց քննությունը լեզվական առանձնահատկությունների բազմաթիվ հետաքրքիր կողմեր է վերհանել և ամբողջական պատկերացում տվել տվյալ ժողովրդի աշխարհընկալման և մշակույթի մասին:

Ժամանակակից պարսկերենի, բախթյարիի, նեհավենդիի, գիլաներենի, տաջիկերենի և իրանական այլ լեզուների ու հայերենի ընձեռած նյութի քննությամբ պարզվում է, որ «ձի» առանցքային բառույթի կիրառությամբ ձևավորված ասացվածքները, դարձվածքները և կայուն բառակապակցություններն ունեն լայն կիրառություն: Դրանք հնարավորություն են տալիս մասնավոր բառամիավորների հիման վրա ընդհանուր պատկերացում կազմել ձիանունների կիրառության մասին և ստանալ բավականին ուշագրավ մի պատկեր, որն էլ իր հերթին ցույց է տալիս պարսից լեզվի բառաշերտի այս հատվածի համակողմանի քննության կարևորությունն ու անհրաժեշտությունը: Ընդ որում, հատկապես դարձվածաբանական միավորներում պարսկերենի ձիանունների ուսումնասիրությունը և հայերենի հետ տիպաբանական զուգահեռների քննությունը փաստում են երկու լեզուների միջև երկարատև շփումների արդյունքում ի հայտ եկած բավականին զգալի ընդհանրությունները: «Ձի» կենդանու անունը պարունակող որոշ դարձվածաբանական միավորներ ձևով և բովանդակությամբ նույնն են թե՛ պարսկերենում և թե՛ հայերենում: Որոշ դեպքերում դրանց մի մասի իմաստները երկու լեզուներում էլ գոյություն ունեն, սակայն տարբեր են արտահայտման եղանակները:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Խաչատրյան Զ., Ձիանունները Խաղանի Շիրվանիի պոեզիայում, Արևելագիտության հարցեր, №13, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, էջ 178-188:
2. Խաչատրյան Զ., *Ասպ* «ծի» ձևույթը հայերենի իրանական ծագման բառապաշարանային միավորներում, Կանթեղ, 1 (74), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2018, էջ 60-68:
3. Խաչատրյան Զ., Պարսկերենում և հայերենում ձիերի անվանումներ պարունակող որոշ դարձվածաբանական միավորների շուրջ, Կանթեղ, 2 (75), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2018, էջ 74-82:
4. Խաչատրյան Զ., Արաբական ծագման որոշ ձիանուններ ըստ պարսկերեն «Do FARASNĀME. MANSUR O MANZUM» ձիամատյանի, Արաբական ուսումնասիրություններ, № 10, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 256-270:
5. Խաչատրյան Զ., Իրանական ծագման որոշ ձիանուններ գրաբարում և միջին հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, № 1 (28), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019, էջ 49-58:
6. Խաչատրյան Զ., Թյուրքական ծագման ձիանունները պարսկերենում, Արևելագիտության հարցեր, № 14, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 393-402:

ЗРУИ ГРАЙРОВНА ХАЧАТРЯН
ИППОНИМЫ В ПЕРСИДСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ.
СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ

Диссертация на соискание ученой степен кандидата филологических наук по специальности
10. 02.02 «ОБЩАЯ И СРАВНИТЕЛЬНАЯ ЛИНГВИСТИКА»

Защита состоится 10 февраля 2020г. в 15⁰⁰ часов, на заседании специализированного
совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН
РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Система наименований домашних животных – один из древнейших и наиболее устойчивых пластов лексического запаса персидского языка и важная часть основного словарного фонда иранских языков. Исследование тематической лексики показывает, что среди множества названий домашних животных центральное место занимают слова со значением *лошадь*.

Изобилие иппонимов в лексике персидского языка обусловлено и тем, что на протяжении веков в жизни иранских народов лошадь имела культовое значение, считалась животным, необходимым для жизни и существования. Впервые *лошадь* упоминается еще в «Михр-Яште» – одном из гимнов Авесты, собрании священных текстов зороастрийцев, – где говорится о священных белых быстроногих конях божества Солнца Митры.

Необходимо отметить, что древние традиции коневодства, развитого у иранских народов, также предполагают большое количество иппонимов в персидском языке.

Диссертация состоит из введения и трех глав, разделенных на подглавы и подразделы, заключений, списков сокращений и литературы, приложений.

Первая глава диссертации «Иппонимы в персидском языке» состоит из двух подглав с соответствующими подразделами, в которых всестороннему анализу подвергается вся система иппонимов в персидском языке, согласно происхождению и лексическому значению.

При классификации с точки зрения метода синхронного анализа упоминаемых в персидском языке иппонимов в подглаве «Классификация иппонимов по семантической группе», в первую очередь, важен был их смысловой анализ, благодаря которому были выявлены языковые пласты некоторых контекстных групп.

Вторая подглава «Классификация иппонимов по происхождению» состоит из 3-х подразделов. В персидском языке иппонимы с этимологической точки зрения представляют собой довольно интересную картину. В этой главе был проведен по возможности тщательный и всесторонний анализ иппонимов персидского языка, выделяя лексические пласты исконно иранского, арабского и тюркского происхождения.

В подразделе «Иппонимы исконно иранского происхождения» подробно проанализированы иппонимы иранского происхождения в персидском языке⁹. Они составляют важнейшую часть системы иппонимов персидского языка, демонстрируя не только богатство

⁹ Исходя из обилия иппонимов исконно иранского происхождения, мы сочли целесообразным разделить их в диссертации на корневые и описательные.

лексики, но и четкую наследственную связь между древнеперсидским и среднеперсидским языками. Являясь койне – наддиалектным литературным языком, - новоперсидский вобрал в себя иппонимы и персидского, иранского происхождения, самой заметной единицей среди которых является как раз слово *asb/asp* «лошадь» – очевидное мидийско-парфянское заимствование, упоминавшееся еще в период древнеперсидского языка.

Во втором подразделе «Иппонимы арабского происхождения» рассматриваются иппонимы, заимствованные из арабского языка. Лишь малая их часть используется сейчас в активном словарном фонде персидского языка, большинство же подверглось определенным фонетическим и довольно широким семантическим изменениям.

В третьем подразделе под названием «Иппонимы тюркского происхождения» исследуются иппонимы тюркского происхождения, которые в количестве уступают исконно персидским и заимствованным из арабского словам, но, тем не менее, составляют довольно примечательный пласт системы иппонимов в персидском языке.

Во второй главе диссертации «Персидские иппонимы в армянском языке», состоящей из двух подглав: «Персидские иппонимы в габаре и среднеармянском языке» и «Персидские иппонимы в современном армянском языке и диалектах», – рассматриваются те иппонимы, которые засвидетельствованы в персидском и встречаются в армянском языке и его диалектах, а также иппонимы, не встречавшиеся в персидском языке, однако корнями этимологически восходящие к иранскому.

В исследовании иппонимы иранского происхождения, упоминавшиеся в армянском языке, условно разделены на две группы: а) иппонимы, засвидетельствованные в персидском языке: *шищ*, *բերգիր* и др., б) иппонимы, которых нет в персидском, однако либо само слово этимологически восходит к иранскому (*աշխուշի* (масть лошади), *իժոյգ*, *բոյնի*), либо это образованные согласно правилам армянского словообразования сложные и производные слова, один из компонентов которых имеет иранское происхождение (*шищшищիշիիկ*, *երի-գիճի* и др.).

Третья глава диссертации «Литературное и фразеологическое употребление иппонимов» состоит из двух подглав.

В подглаве «Иппонимы в классической персидской литературе» рассмотрены иппонимы, засвидетельствованные в классической персидской литературе. Их упоминания в литературе настолько частотны, что их невозможно полностью представить в рамках одной подглавы. Учитывая это обстоятельство, были рассмотрены иппонимы, упоминавшиеся в произведениях трех известных персидских классиков: Абулькасыма Фирдоуси, Хагани Ширвани и Низами Гянджеви. Этот выбор обусловлен тем, что в их произведениях эпического жанра и большого объема наиболее широко употребляются иппонимы.

В подглаве «Иппонимы в персидских поговорках, фразеологизмах и устойчивых словосочетаниях в сравнении с другими иранскими языками и армянским языком» предметом исследования стал материал, в котором была использована стержневая лексема «ձի» (сопоставляемые фразеологизмы и поговорки выбирались по принципу смысловой и структурной близости).

HIPPONYMS IN THE PERSIAN AND ARMENIAN LANGUAGES: A COMPARATIVE STUDY

Thesis for PhD of Philology, specialty 10.02.02 "General and Comparative Linguistics"
Defense will be held on 10 February, 2020 at 15⁰⁰, at the session of Specialized Council on
Linguistics 019 of HAC in the Institute of Language after Hr. Acharyan Nas RA (address:
Yerevan, 0015, Grigor Lusavorich str. 15)

RESUME

The Pet Names System is one of the oldest and most stable layers of Persian vocabulary (Lexicon) and an important part of the main vocabulary of Iranian languages. The thematic vocabulary study reveals that in many pet names, words meaning "Horse" occupy a pivotal place.

The abundance of hipponyms in the lexicon of the Persian language is also due to the fact that for centuries horse was a sacred animal in the life of Iranian people, and it was also considered as a means of lifestyle and survival. The first information about horses is found in one of the hymns of Avesta, the sacred book of Zoroastrianism. In "Mihra yašt" the sacred, fast and white horses of Mithra, the Divinity of Light are mentioned.

It is worth mentioning that the ancient traditions of horse breeding developed by the Iranian people, also imply a rich thematic vocabulary of horses in Persian.

The dissertation consists of an introduction and three chapters (which are divided into sub-chapters and sub-sections), conclusion, a list of abbreviations, bibliography and appendices.

The first chapter of the dissertation, entitled "Hipponyms in Persian", consists of two sub-chapters with their appropriate sub-sections, where the whole system of horse names of the Persian language is comprehensively examined in terms of meaning and origin.

In the sub-chapter of "The classification of hipponyms by the semantic groups" the horse names attested in Persian are classified using the synchronic approach of the linguistic analysis. In this case their semantic examination is of primary importance, which reveals the linguistic layers of several sub-semantic groups. In the dissertation the horse names attested in Persian have been semantically classified for the first time.

The second sub-chapter, which is entitled as "The classification of hipponyms by origin" consists of three sub-sections. The horse names in the Persian language are quite interesting from genealogical and etymological points of view, the detailed examination of which sheds light on the history of the formation and further development of the whole horse names system of this language. In this sub-chapter the horse names attested in the Persian language are comprehensively examined in detail and the lexical layers of native Iranian, Arabic and Turkic origin have been separated.

In the sub-section "Hipponyms of native Iranian origin" the horse names of native Iranian origin are comprehensively examined. These lexical units are the most important part of the horse names system of the Persian language, which display not only the rich vocabulary of this language, but also the explicit genetic relation with old and middle Iranian languages. By being a koine language, i.e. a dominant standard language, the New Persian language includes also non-Persian horse names of Iranian origin, amongst which the most remarkable unit is the word *asb/asp*

'horse', which is an obvious Medo-Parthian borrowing, attested since the Old Persian language era.

In the second sub-section, "Hipponyms of Arabic origin", the horse names borrowed from the Arabic language are examined. Nowadays only a small part of these words are used in the active vocabulary of the Persian language, many of them underwent some phonological and quite broad semantic changes.

In the third sub-section, "Hipponyms of Turkic origin", the horse names of Turkic origin of Persian are examined, which are quantitatively inferior to inherited horse names and Arabic borrowings, but in any case form a quite remarkable layer of the Persian horse name system.

The second chapter of the dissertation is entitled "Hipponyms attested in Persian in the Armenian language" and consists of two sub-chapters: "The horse names attested in Persian in Old and Middle Armenian languages" and "The horse names attested in Persian in the Modern Armenian language and dialects". In these parts of the dissertation we examine those horse names, which are attested in the Persian language and are found in Armenian and its dialects, as well as the horse names, which are not attested in Persian, but in Armenian the word root goes back to Iranian protoform.

In this study the horse names of Iranian origin attested in the Armenian language are conditionally divided into two groups: a) horse names attested in Persian, such as *asp*, *bergir*, etc., b) horse names which do not exist in Persian, but either the word etymologically goes back to the Iranian proto-form (*ašxet*, *nžoyg*, *bočoy*) or they are complex words one of the components of which is of Iranian origin (*aspastanik*, *eragadzi*).

The third chapter of the dissertation, entitled "The literary and phraseological attestations of horse names", consists of two sub-chapters.

In the sub-chapter "Hipponyms in the Persian classical literature" we examine those horse names, which are attested in the Persian classical literature. Their evidence in literature is so abundant that it is impossible to discuss them in the frames of a sub-chapter. By taking this fact into consideration, the horse names found in the works of three famous Iranian classic writers, Abul-Qâsem Ferdowsi, Khaqani Shirvani and Nizami Ganjavi have been chosen. Such a choice is also due to the fact that the works of above-mentioned authors are large-scale works of epic genre in which the horse names are quite frequently used.

In the chapter entitled "Hipponyms in Persian proverbs, phrasemes and idioms in comparison with other Iranian languages and Armenian" the language material formed by the usage of the key lexeme "horse" was discussed.